ՊԱՐԻԶԻ ՄՈԴԱՆԵՐ

№ 2 փետրուար 1901 փետրուար № 2

Նկ 1—2. Այցի զգեստներ։

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նկ 1. Այցի զգեստ։ Ներքնազգեստը շալէ կտորից է, առջևը լայն ծալածքով, կողքերին և ետևից մի քանի ծալեր ունի։ Փղանցքները ծաղկակար։ Նոյնպէս ծաղկակար բոլերոն կոճկուում է կողքից երկու կոճակով։ Երկար կռները արմունկի վրայ բուֆֆ ունին։ Կորսաժը կրծկալով և թաւիշէ օձիքով։ Փետրից շինած գլխարկը զարդարուած է թաւիշով և փետուր. ներով։

Նկ 2. Այցի զգեստ. կապտագոյն շալից է։ Ներքնազգեստը կոճկուում է կողքից մորթէ եզերազարդի տակ։ Կորսաժը զուգած է երիզով և մոր. թով։ Կուշակը սև թաւիշից է։ Ձեմի. զետը և բուֆֆերը թևերի մօտ սպի. տակ մուսլինից։

Նկ 3. Նորաձի աղջկայ վերնազգեստ։ Կապոյտ-կանաչագոյն վերնազգեստը զարդարուած է գառան մորթէ եզրով։ Ուսնոցի եզրները զուգուած են գառան մորթիով։ Օձիքը թաւիշից կամ մոր. թից։ Թևերը զարդարուած են թաւի. շով կամ նոյնպէս գառան մորթով։ Թաւիշէ բիրետը նոյնպէս զուգուած է գառան մորթով։

Նկ 4. Ուղիղ կանգնող կանացի վերարկու։ Զարդարանքն է լայն դարձ կարով բիէ։

Նկ 5. Մանկական հանդերձ։ Շալէ կտորից անկաւոր հանդերձը կոճկուում է կողքից երեք կոճակով։ Օձիքը շուռ տուած է։ Գոտիկը ճարմանդ ունի։

Նկ 6. Մաուիճե, քիշմիրից կամ փլա. նելից, զարդարուած է ծաղկակարով։

Չև 3. Նորատի աղջկայ զգեստ։ Չև 4. Ուղիղ կանգ. կան. զգ.

Չև 7. Մաֆիճե, վանդակազարդ կտորից, օձիքը բարձր։ Թևերը թաւիշէ բուֆֆերով։

Չև 8. Երեկոյքի թեւ թեթև կտորից, պճնած մետաքսեայ ժապաւէնով։

Չև 9. Կորսաժ մետաքսից, պճնուած կանաչ և սպիտակ մետաքսաթելի ծաղկակարով։ Բարձր օձիքը ունի թաւիշէ փողպատ։ Նեղ թևերը զարդարուած են ծալերով։ Գօտին զուգաձև է ճարմանդով։

Չև 10. Կորսաժ-բոլերո. զարդարուած է սև թաւիշով։ Օձիքը բարձր։ Թևերը նեղ, վերջը լայնացած։

ՉԱՐ ԵՒ ԲԱՐԻ ՄԱՐԴ

(Հատուած Լ.Տոլստոյի «Յարութիւն» վէպից)

Ամենասովորական և տարածուած սնահաւատութիւններից մինն էլ այն է, որ իբր թէ ամենայն մարդ ունի իր որոշ յատկութիւնները, որ լինում է բարի մարդ, չար մարդ, խելօք, յիմար, եռանդուն, անտարբեր և հակառակը։ Բայց անարդարութիւն կլինէր, եթէ մի մարդու մասին ասենք, որ նա միշտ բարի է, կամ խելօք, իսկ մի ուրիշի մասին, թէ նա միշտ չար է կամ յիմար։ Մինչդեռ մենք միշտ այդպէս ենք բաժանում մարդկանց։ Իսկ դա սխալ է։ Մարդիկ նման են գետերի. ջուրը ամենի մէջ միատեսակ է և ամենուրեք միևնոյնը, բայց ամեն մի գետ լինում է մի տեղ նեղ, միւս տեղ լայն, մի տեղ արագավազ, միւս տեղ հանդարտ, մի տեղ յստակ, միւս տեղ պղտոր, մի տեղ սառը, մի այլ տեղ տաք։ Այդպէս էլ մարդիկ։ Ամեն մարդ իր մէջ կրում է մարդկային բոլոր յատկութիւնների կերպերը, և երևան է հանում երբեմն այս, երբեմն այն յատկութիւնները, և յաճախ ինքն իրան միանգամայն չէ նմանում, մնալով հանդերձ միշտ միևնոյն մարդը։ Մի քանիսների մէջ այդ փոփոխութիւնները երևան են գալիս աւելի սուր կերպով։

Դ. Նարեկեան

ՍԱԼՈՆԱԿԱՆ ԹԵԹԵՒ ԽՕՍԱԿՑՈՒԹԻԻՆ

(Փոխադրութիւն)

Սալոններում ճառախօսներ չեն պահանջւում, այլ այնպիսի մարդիկ, որոնք ընդունակ են թեթև խօսակցութիւն վարելու։ Աշխոյժ և հաճելի կերպով զրուցել նմանալը մի այնպիսի արուեստ է, որ շատ բարձր է գնահատւում հասարակական բոլոր խաւերում։

Եթէ դուք տիրում էք այդ արուեստին՝ ինչպիսի բաւականութիւն է զգում տանտէրը կամ տանտիրուհին ձեզ իր հիւրերի թւում տեսնելով։ Ամենքն էլ անընդհատ ձեր հարևանութիւնն են փնտրում եթէ սեղանի մօտ նրա տած ժամանակ, թէ պարահանդիսին և թէ ամենուրեք։

Այո, բայց բազմաթիւ հասարակութեան մէջ իսկապէս ինչի՞ մասին պէտք է խօսել։—Հոլորի և ամեն բանի մասին, սակայն համառօտակի, առանց երկարաձգելու և ընդլայնացնելու։ Դուք պէտք է հեշտ ու ճարպիկ կերպով մի առարկայից միւսն անցնէք, թէ խօսելով, թէ ուրիշներին էլ իրանց մտքերն արտայայտելու միջոց տալով, և թէ շարունակելով։ Ձատերը, անշուշտ նկատած կլինէք, մի շատ տգեղ և միանգամայն խայտառակ սովորութիւն ունէն, այն որ՝ երբ նրանք սկսում են խօսել, էլ հնար չէ լինում նրանց ընդմիջելու, միջոց չեն տալիս, որ դիմացինն էլ խօսի, նա էլ մի բան ասի իր կողմից, մի կարծիք յայտնի, մի միտք արտայայտի. հէնց «ներողութիւն, խօսքս մի կտրէք, թոյլ տէք նախ վերջացնեմ. ապա՝... ասում ու շարունակում է... ձանձրացնելու չափ։ Երբ խօսակցութեան թելը կտրում է, պէտք է իմանալ մի այլ նիւթ վերցնել, և չըպէտք է շարունակ ձեր սրամտութիւնը ծախսէք. թողէք ուրիշներն էլ սրախօսեն, փայլեն իրանց ճարտարախօսութեամբ, պէտք է թեթև սխալանքները ներէք, պակասութիւնները չըբծբծէք, որպէսզի զրուցատրուելն վերջը ձեզանից դոհ մնան և ձեր մասին անզուգական խօսակցի կարծիք ունենան։

Թեթև ու հետաքրքիր խօսակցութիւն առաջ տանելու համար աշխարհում անսպառ նիւթ կայ։ Ջատ էլ խորախորհուրդ թեմաների ետևից մի վազէք, այլ յարմար րոպէին օգտուեցէք ամեն բանից։

Մտքի շարժունութիւնը թեթև ու աշխոյժ զրուցաբանութեան գլխաւոր պայմանն է հանդիսանում, որի միջոցով դժւար չէ մի առարկայից միւսին անցնելը, փընտրելով ամեն մէկի մէջ միմիայն հետաքրքիր կողմեր։ Այստեղ ամենամեծ արգելտիքը միակողմանիութիւնն է։ Մեր մէջ սովորութիւն կայ մի որև է թերթի, գործիչի մասին խօսելիս միայն թոյլ և վատ կողմերը յիշել, մի մեանց առաջ պախարակել, բամբասել, առանց նրանց լաւ կողմերն ևս յիշելու, նրանց գործունէութիւնը գնահատելու։ Մի թեթև սխալ նրանց կողմից՝ և արդէն դատավճիռը պատրաստ է։ Այս կողմից մեր մամուլն ու սալոնը իրար շատ նման են։ Աշխատեցէք կրկնողութիւնների մէջ չընկնել և պատրաստ ունեցէք գրոյցների ու անեկդոտների ընդարձակ պաշար։

Կան մարդիկ, որոնք սիրում են ամեն տեղ միայն մի բանի մասին խօսել։ Պատահել եմ դերասանի, որ լայն շրջանում եղած ժամանակ պարծենալով ասել է, թէ «թատրոնից դուրս ես ոչինչ չեմ ճանաչում... իմ խօսելիքը միայն թատրոնի մասին կարող է լինել»... Վարժապետը շրջունակ իր մանկավարժական տերմիններն է առաջ տանում և անդադար չար աշակերտների ու տետրակների մասին է ճառաբանում։ Ջատերն էլ հէնց տեղի, անտեղի Պլատոնից, Դեմոսթենէսից, Կանտից ու Կոնտից, Վալտերից ու Վոլտերից են խօսում։ Ցանկալի էր, ի հարկէ որ, նրանք փոքր ի շատ է ծանօթ լինէին այդ գիտնականների ու գրականագէտների կեանքին, գործունէութեանը և հեղինակութիւններին, բայց քանի որ շատերը շատ մութն ու ազօտ հասկացողութիւն ունին, ուստի անհրաժեշտ է նախ ծանօթանալ նրանց հետ, և ապա խօսել նրանց մասին։ Պէտք է աշխատել ծուղակն ընկնելուց ապահով լինել։

Տղամարդիկ թեթև խօսակցութիւն վարելու կողմից՝ համեմատաբար՝ այնքան ընդունակ չեն, որքան կանայք։ Նրանք (տղամ.) չըգիտեն այնքան էլ մանրակրկիտ լինել։ Բայց դրանց մէջ էլ շատ կան ընտիր խօսակիցներ, որոնք գիտեն խօսակցութիւնը միշտ հետաքրքիր աստիճանի վրայ դնել։

Որքան բազմազան են ձեր խօսակցութեան առարկաները սալոնական զրուցաբանութեան ժամանակ, այնքան նա աւելի կենդանի և զբաղեցնող է լինում։ Այստեղ ամեն ինչ կարող է խօսակցութեան նիւթ լինել. հրաւէր նորութիւնները, ձեր ծանօթների շրջանում տեղի ունեցած զանազան անցքերը, ներկայացումներ, համերգներ, ժողովներ, ճաշապարհորդական արկածներ (ձեր կամ ուրիշների կեանքից), հասարակական հարցեր, զարմանալի դէպքեր, ձեր այցելած տօնախմբութիւնների մասին զանազան դիտողութիւններ երևոյթներ ձեր միջավայրում — այս ամենն առաջնակարգ նիւթեր են խօսակցելու համար։ Միայն պէտք է կարգաւորել այդ նիւթը, արուեստօրէն բազմակողմանի դարձնել այն, առանց չափից դուրս լրջութեան մէջ ընկնելու և ոչ մի առարկայի խորքերը մտնելու. պէտք է խուսափել վարդապետական տոնը բռնելուց և յիշեցէք այս խօսքերը, թէ «ամեն տեսակն էլ բոլատրելի է, բացի ձանձրոյթից»։

Զրուցելու համար նիւթ և առիթ դուք կարող էք գտնել ամեն մի քայլափոխում։ Օրինակ՝ դուք հարցնում էք տանտիրոջ աղջկան, թէ լաւ ժամանակ անցկացրեց նա երեկւայ համերգին, ծրագրի որ համարներն ամենից աւելի դուր եկան նրան։ Նրա սիրած նւագախիէներից անցէք կոմպոզիտորին, պատմեցէք նրա կեանքից մի որևէ հետաքրքիր դէպք կամ մի գեղեցիկ գիծ։ Դուք հարցնում էք ջահել օրիորդին կամ տիկնոջը, թէ բարեգործական նպատակով տւած ներկայացումների, պարահանդէսների և բազարների մէջ որև է մասնակցութիւն ընդունում է, և եթէ այո, ինչով. հայկական ներկայացում ե՞ղած ժամանակ գնում է արդեօք թատրոն, առհասարակ ինչ կարծիք ունի հայոց թատրոնի մասին։ Դուք հարցնում էք, թէ հետաքրքրւում է հայ մամուլի կեանքով, մի շշաւ մամուլ, որի մէջ գժտութիւնն ու չկամութիւնը հէնց նրա սկիզբն առնելու օրից տիրապետող են հանդիսացել. մի մամուլ, որ իրանից դուրս այլ ևս ոչ ոքի չի ճանաչում. մի մամուլի, որի նշանակութիւնը, կարծես «միաբանութիւնը անմիաբանութեան մէջն է» դառել, և այլն և այլն։

Պարզ է, որ մենք այստեղ միայն թոյլ կերպով կարողացանք գծել սալոնական խօսակցութիւն վարելու ձևերն ու փորձերը։ Ինչպէս որ դժւար է քչքչան գետակի մինը միւսի մէջ կորչող ալիքների նկարագրութիւնը, ուր ամեն մի ալիք փայլում ու շողշողում է առանձնայատուկ գոյներով, ճիշտ այդպէս էլ դժւար է նկարագրել աշխոյժ, փոփոխական զրուցաբանութիւնը։ Ամեն կողմից հարցեր, պատասխաններ ու նկատողութիւններ են թափւում, ուրախ կատակները մի խօսակցից միւսն են թռչում, այստեղ լսում են ծիծաղ յարուցանող սրա-



Նկ. 5. Մանկական հանդերձ։

Նկ. 6—7. Փաթինէներ քիշմիրից և վանդակազարդ կտորից։

խօսութիւններ, այնտեղ լուրջ խօսքեր, լուրջ դատողութիւններ։

Սալոնական իսկական խօսակութիւն հեշտութեամբ կարելի է վարել առանց չարախօսութիւնների հարկաւ, այստեղ էլ պատահում է յիշել որևէ ծանօթ անձի թուլութեան կամ տարօրինակութեան մասին, կրկնել աչքի ընկնող լուր, բայց օրինաւոր հասարակութեան մէջ այս ամենը կատարւում հարևանցի, անցողակի կերպով, և չըպէտք է երբէք չափից անցնել, անհամութեան հասցնել՝ երկու հմուտ, երգեցիկ բամբասողների նման։ Թեթև զբուցաբանութիւնը, աւելորդ է ասել, որ դիւրագրգիռ տոնով խօսակցութիւններ, թունդ հակաճառութիւններ, իր կարծիքի մէջ յամառ բնոյթներ, դիպչողական խօսքեր, վիրաւորական ակնարկներ, ձանձրացնող բնաւորութիւններ, ոտնձգութիւններ ու անհանգստութիւններ տանել չէ կարող։ Անտանելի է, երբ մէկը շարունակ իր անձն է բարձրացնում, ուրիշի անունը վայր ձգելու նպատակով։ Սալոնական զրուցաբանութեան նպատակը թեթև, ախորժելի զարմանքն է, բայց զարմանքն ասելով էլ չըպէտք է դատարկաբանութիւն և մանկարութիւն հասկանալ։ Արտայայտութիւնների մէջ չափաւորութիւն՝—ահա խօսակցութեան ընտիր ձևը։

Դ. Բարուրեանց

ԻՄ ԻՂՁԸ

Ա՛հ, իղձ թէ ըլլայի
Նուրբ ոգի մը երթերային,
Անդուլ, անվերջ սաւառնէի
Ձիրջ աշխարհ մը երազային։

Վարդ ամպերու մէջ պարուրած,
Անոյշ սիւքով ողողէի.
Փանէի հոն իմ լուռ վշտաց
Սփոփանքը, կեանք անհունի։

Հեռու զծուծ, սէն աշխարհէն,
Հոն, ուր չկայ թոյնը կեանքի.
Հեռու մարդկանց սև սրտերէն,
Կապոյտին մէջ ջինջ երկնքի։

Օր. Ջ. Ալեանեան

ԵՐԱՋ

Հեյնրիխ Սենկեւիչի պատմութիւնից

Մի հիւրասենեակում, ուր մի մեծ հասարակութիւն էր հաւաքել, խօսում էին զարմալի կերպով ամեն տեսակ հրաշալի երևոյթների, նախազգացումների, տեսիլների և մարդկային կեանքի զանազան դիպուածների վրայ, որոնք աւելի ու աւելի գերազեցնում են մեր կեանքի «դերբնականի և հրաշալի» բաների մէջ նիւթուածների և ոչ նիւթուածների խելքը։

Ներկայ եղողների մէջ գտնւում էր նոյնպէս և մի տեսչին բժիշկ, որ իր արուեստի համաձայն սկեպտիկի դեր էր խաղում։ Ընդհանուր խօսակցութեան վերջը մի տիկին առաջարկեց այն բժշկին մի հարց, արդեօք նրա կեանքում չէ պատահել մի այնպիսի բան, որ նա անկարող լինի բացատրել։

— «Այո, եղել է իմ երիտասարդական օրերում, պատասխանեց նա, «ես մի երազ էի տեսել, որը զարմանալի պարզութեամբ և ճշտութեամբ քանիցս անգամ կրկնւում էր իրարու ետևից և նա այնպիսի արտաքոյ կարգի մի բան էր, որ իր սքանչելութիւնով գերազանցում էր այն ամենը, ինչ որ երբ և իցէ լսել էի և եմ կամենում էք, կարող եմ պատմել, թէ ինչպէս, որտեղ, որպիսի սարք ու կարգում և որպիսի հանգամանքներում այս ամենը պատահել էր։ Հոլորքեան ինդրեցին բժշկին և նա սկսեց իր պատմութիւնը։

— «Սրանից քսան տարի առաջ, ես ծովում լողանալու համար Բիարից քաղաքումն էի գտնւում։ Այնտեղ ես սիրահարեցի մի անգլիուհու վրայ, որը լողանալու համար հագնում էր ձկան թեփի պէս փայլուն զգեստ։ Դա մի վերին աստիճանի տարօրինակ տիկին էր։ Մի անգամ նա պահեց նաւակում լինէ ու միւս իր երկրպագուներին գիշերւայ մինչև ժամի երեքը։ Մենք հեռանում էինք աստ-

Չև 8. Երեկոյեի թև.

զալից երկնքի և հոգիների մէջ մոլորակից միւս մոլորակի ճանապարհորդելու հնարաւորութեան ցնորքների վրայ։ Ես վերադարձայ տուն յոգնած, տանջուած և տեղն ու տեղը բազկաթոռի մէջ այնպէս քնեցի, որ սեղանիս վրայ գտած նամակը մինչև վերջը չըկարողացայ կարդալ։ Կոպերս խփելուն պէս՝ ես ընկայ երազների մէջ—և ահա տեսնում եմ, որ ես մի մեծ անյայտ քաղաքում ինձ մի անծանօթ տնից դուրս եմ գալիս. մեծ դռան մօտ մի սայլակ էր կանգնած։

Ի դէպ պէտք է ասած, որ արտասահմանում այն տեսակ տխուր, բայց անխուսափելի հանգամանքների համար, ինչպէս մեզանում, բարձր փեսկալներ չըկան։ Այնտեղի սայլակները (corbillard) ապակեայ կողերով հրկայն կառքի ձև ունին և յետևից մի դուռ, որից սայլակի մէջ ներս են հրում դագաղը։ Չէնց այսպիսի սայլակ երազումս տեսայ իմ դուրս եկած տան մօտ։ Սայլակի մօտ մի տղայ էր կանգնած, մօտ տասնուհինգ տարեկան, հագին նեղ տրեզով և մի շարք մետաղեայ կոճակներով թիկնոցակ։ Երբ ինձ նկատեց, նա սայլակի դուռը բաց արաւ և ողջունելով, սիրալիր կերպով, ինձ ձեռքով հրաւիրեց ներս մտնել կամ վեր բարձրանալ մէջը։ Թէպէտ երազում ամենից արտաքոյ կարգի բաները թուում են խիստ պարզ և բնական, բայց յիշում եմ, ես այդ տրզից այնպէս վախեցայ և յետ նետուեցայ, որ գլուխս կպաւ բազկաթոռի չենակին։ Ես արթնացայ։

Երկու օրից յետոյ, երբ ես իմ ծանօթ անգլուհու ախորժելի ընկերակցութեան մէջն էի գտնուում, բոլորովին մոռացել էի այդ երազի մասին, բայց երրորդ գիշերը այս երազը զարմանալի ճշտութեամբ կրկնուեց։ Այնուհետև նա կրկնուում էր իւրաքանչիւր երեք-չորս օրից յետոյ։ Վերջի վերջոյ այդ բանը սկսեց խիստ անհանգիստ սնել ինձ։

Ամենից զարմանալին այդ արտաքոյ կարգի ճշտութիւնն էր՝ տան, սայլակի և մանաւանդ տղի երեսի և զգեստի միակերպութիւնը, որը խիստ կերպով ինձ հրաւիրում էր այդ սարսափելի դիակալի մէջ։

Ես մտքումս շատ լաւ պահեցի նրա թիկնոցակը. տրեզը, մանր մետաղեայ կոճակները, նրա խարտիաշ մազերը և գորշ, համարեա, անգոյն աչքերը որ միմեանցից հեռու տեղաւորած, փոքր ինչ ձկան աչքերի էին նմանում։

Առհասարակ երազի այդպիսի յամառութեամբ կրկնելը ի նկատի առած՝ դուք, պարոններ, կըհասկանաք իմ անհանգիստ լինելու պատճառը։

Մի քանի շաբաթից յետոյ, ես գընացի Պարիզ և նոյն հիւրանոց իջայ, որտեղ իջել էր և իմ անգլիուհին։ Մենք այնտեղ հասանք երեկոյեան դէմ, մօտաւորապէս ճաշաժամին, ծանօթների բաւական բազմաթիւ ընկերութեան մէջ։ Ճուտով շորերս փոխելուց յետոյ, ես մօտեցայ բարձրացող մեքենային, որ իջնեմ ճաշարան։ Միջանգրում ես պատահեցի ծանօթներիս, որոնք ուղղուում էին նոյնպէս դէպի մեքենան, բայց առաջինը ես յանկարծ դռան մօտ և ելեքտրական զանգակի կոճակը սեղմեցի։ Կարճ ժամանակից յետոյ, ես լսեցի բարձրացող մեքենայի խուլ աղմուկը, այնուհետև նրա դռնիկը բացուեցաւ և... ես չեմ նետուեցի, ինչպէս չեմ նետուած կըլինէի, եթէ առաջս մահ տեսնէի։ Բայց դռնակում տասն ու հինգ տարեկան տղան էր կանգնած, խարտեաշ մազերով՝ տրեզով և մետաղեայ կոճակներով սև թիկնոցակը հագին, իսկ և իսկ այնպիսին, որպիսին ես քանիցս անգամ երազումս տեսել էի։ Նա դեռ ճօճուող մեքենայի դռնիկի մօտ էր կանգնած և սիրալիր կերպով հրաւիրում էր ինձ ներս մտնել։

Խոստովանում եմ, կեանքումս առաջին անգամ ես զգացի, որ ահից մազերը կարող են իսկապէս փշաքաղել։

Ես շուռ եկայ և գժի պէս սանդուղքով վայր վազեցի։ Ճաշարանը ներքևումն էր։ Բարձրացնող մեքենան ակներև սպասում էր, որ աւելի շատ հասարակութիւն հաւաքուէր, իսկ ես այդ ժամանակ նախասենեակում նստած էի ճօճուող բազկաթոռի վրայ, աշխատելով փոքր ինչ հանգստանալ, որովհետև ես քաթանի պէս գունատ էի,—այդ ես զգում էի։

Եւ չեմ յիշում, Թուզէ անցել էր մի քանի վայրկեան, կամ մի քանի րոպէ, ինչպէս յանկարծ սիրտ կտրտող աղաղակ եմ լսում, այնուհետև մի ձայն, մի թնդիւն... և դիտակցութիւնս կորցրի։

Երբ որ ես սթափուեցայ, նախասենեակում տեսայ մարդկանց դիակներ, ձեռաց փաթաթած արիւնոտ սաւանների մէջ։

Տղան ուր որ անյայտացաւ։ Այս բանը ես չեմայ իմացայ։

Իսկ այժմ թոզ իւրաքանչիւր մարդ այս ամենը բացատրի, ինչպէս որ կամի։ Դուք իրաւունք ունիք ինձ սկեպտիկ անուանել. եթէ այս բանը պատահած լինէր որևէ մէկի հետ,—ես ամենևին չէի հաւատալ։

Մով. Գ. Ցովնանեան

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ԴԷՄ

—

Ամերիկան անսպասելի նորութիւնների երկիր է. ահա դրանցից մէկը։ Մի քանի ժամանակ է իր վրայ ու. շադրութիւն է դարձրել մի գաղտնի ընկերութիւն «Society of Womanhaters»։ Նա պատրաստուել է հարուարդեան համալսարանում և իր համար նպատակ է ընտրել մաքառել «կանանց համալսարան մտնելու դէմ»։ Ընկերութիւնը բաժիններ ունի ուրիշ համալսարաններում։ Ընկերութիւնն ունի անդամներ և օտարերկրացիների մէջ, ի միջի այլոց անդամներն են Ուաշինգտոնի չինական դեսպանը, Սիսիլ Րոդսը, լորդ Կիտչիները։ Ընկերութիւնը գաղտնի է գործում, բայց իրաւաբան-կանայք արդէն սկսել են պատերազմներ իրանց կոմիկ հակառակորդների հետ։



Նկ 9. Կորած մետաքսից։

ՉԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆ ՈՒ ՋՕՐՔԸ

—

Չինացիների մէջ գոյութիւն ունի կառավարչական դատարան, որ յանցաւորներին պատժում է ծանր մարմնական պատիժներով։ Ընդհանրապէս դրան, դործերի մեծ մասը վճռում է ընտանեկան դատարանը։ Ի՞նչ օրէնքներով են դատում ընտանեկան դատարանում։ Ի՞նչի վրայ է նա հիմնուած։ Ի՞նչ գօրութիւն ունի ընտանեկան վճիռը և ինչո՞ւ նրան ենթարկւում են։

Ընտանիքի գլխաւոր անդամի դատաստանն այն է, որ գոյութիւն ունի իւրաքանչիւր մարդու սրտի մէջ, իսկ ենթարկւում են նրա վճռին այն պատճառով, որ զգում են իրանց յանցանքը։

Հասարակ դատաւորը լսում է գործը, դատում է այն և վճիռ կայացնում։ Ընտանեկան դատաւորը նախ և առաջ բացատրում է և ցոյց է տալիս յանցաւորին իր գործի վատութիւնը և հասկացնում է, որ չըպէտք էր անել։ Յանցաւորը համոզւում է վճռի արդարացի լինելը այդ պատճառով կարիք չի լինիլ նրա դէմ բռնութիւն գործ դնելը։ Տեսնւած են դատապարտւածներ, որոնք իրանց ոտքերը բռնում էին աւելի չարմար շղթայելու համար։ Պէտք է և այն հանգամանքն ի նկատի ունենալ, որ ընտանեկան դատարանը նախ քան իր անդամին պատժելը, ներում է նրան շատ անգամ նրա կատարած այլ և այլ զեղծումները և բանն այնտեղ են հասցնում, որ յանցաւորը զղջում է մեղքը և ուղղւում։ Իր խորհուրդներով և զգուշացնող միջոցներով՝ ընտանեկան դատարանը դարձնում է մոլորւած անդամին դէպ ուղիղ ճանապարհը, ինչ որ չեն անում եւրոպական դատարաններն իրանց բանտերով։

Չինական գօրքի մասին երկար կանգ առնելու պէտք չկայ։ Եւ իրաւի, ինչ գօրք կարող է ունենալ մի երկիր, որտեղ ոչ թէ խօսքով, այլ գործով մարդիկ հաւատում են բոլոր մարդկանց եղբայրութեանը։ Նրանք հաւատում են, որ մարդկանց համար միայն այն ժամանակ լաւ կըլինի, երբ իւրաքանչիւրը կաշխատի իրան ուղղել։ Չինացիները պատերազմը համարում են վատ և զզւելի գործ, և ամենևին չեն սիրում պատերազմ յիշեցնող որ և է բան։ Թէև չինացիները այն աստիճան կատարելութեան չեն հասել, որ օտարականներին սիրով ընդունեն, բայց երբէք նրանք պատերազմ չեն վարում ուրիշ ազգերի դէմ, իսկ գօրքը միայն պաշտպանութեան համար է ծառայում իրանց։ Պատերազմը և զինուորական կոչումը Չինաստանում այնպէս չի գնահատւում, ինչպէս մեզանում, զինուորական մարդն այնպէս կարևոր չէ նրանց մօտ, ինչպէս որ է մեզանում։ Մինչև անգամ վերջին աղքատ չինացին ցած գործ է համարում զինուոր գնալը, այնքան աննախանձելի է թւում նրան զինուորական կոչումը։ Այլ և այլ ազգեր շատ անգամ են նւաճել Չինաստանը, բայց այնուամենայնիւ, չինացիները մնացել են նոյն չինացին, հաւատարիմ իրանց բարի բարքերին և չեն անձնատուր եղել նւաճողների օրինակին։ Նրանք, ընդհակառակը, յաղթողներին իրանց ենթարկելով՝ նրանց չինացի են դարձրել։ Չինացիներն ունին մի շատ ամուր և զօրեղ բան, աւելի քան թէ բազմաթիւ զօրքը, որին չէ կարող խորտակել ոչ մի յաղթող։ Այդ բանը չինացու կեանքն է, հիմնուած արդարութեան և աշխատանքի վրայ, մի կեանք, որ քսան-երեսուն դարերի ընթացքում ինքն իրան ազնւացնելով՝ շարունակ ազնւացել է։

Թարգմ. Ն. Ե. Նիկողոսեան



Նկ 10. Կորած բոյերը։

Անսեղ զրոյցներ

—

Թատրոնից դուրս գալիս

—Ինչպէ՞ս անցաւ, տիկին, ներկայացումը. լաւ խաղացին. հարցնում է ազախինը։

—Ա՜խ, շատ սրտաշարժ. դեռ մինչև վերջումը վեց մահ կար։

—Այո, այդպէս էլ կարծեցի. հէնց դրա համար էլ այնքան պսակներ տարան գէպի բեմ...

—

—Ինձ, ես քեզ համար այդպիսի մի փոքրիկ կին ուզել կեանքիդ լծակից։

—Ի՞նչ արած. ես ընտրել եմ չարիքներից փոքրագոյնը։

—

—Աղջիկս, քեզ տալի ամեն կուրսերը, տարայ բոլոր պարահանդէսները, և այնուամենայնիւ, քեզ մարդու տալ չըյաջողուեց։ Վաղը քեզ համար պատւէր եմ տալու սուպի զգեստներ և ամենին ասա, որ դու որբևայրի ես... Տղամարդիկ ոչ ոքին այնքան եռանդով չեն յետամտում, որքան որբևայրիներին... Աւա՜ղ, դոնէ դրանով կարողանամ քեզ, խղճուկս, մուրազիդ հասցնել։

—

—Կանանցից ես սաստիկ վախենում եմ, և ինձ համար նրանց հետ ծանօթութիւն կապելուց դժւար բան չըկայ։

—Ես էլ եմ սաստիկ վախենում կանանցից, սակայն խոստովանւում եմ, ծանօթութիւն քանդելն աւելի ևս դժւար է։

—

—Այս կինը, պէտք է խոստովանած, իմ ճաշակին միանգամայն համապատասխանում է. սև աչեր, սև մազեր, դէմքի սև գոյն...

—Ը՜ւ աւելացրու՝ սեւ աճցեակ։

—

Ցնծութիւն

—Ձմարիտ, չըգիտեմ, պ. ուսուցչապետ, ինչ դառնայ իմ որդին որ լաւ լինի. բանաստեղծ թէ նկարիչ։

—Ի հարկէ, բանաստեղծ լինելը լաւ է. թուղթը կտաւից աւելի էժան է։

Այլ եւ այլ

Ճենապակի ալբեսից

Նոր արդիւնագործութիւնը հիմնւած է ալբեստը կամ լեռնային վուշը որոշ կերպով պատրաստելու և այդ մէջոցով մի կերպ „ալբեստի ճենապակի“ ստանալու վրայ։ Սա ունի արծաթագոյն սպիտակութիւն, որ գերազանցում է ամենալաւ ճենապակիի սպիտակութիւնից։ Ոչ մի տեսակ հանքային, կենդանական և բուսական թելեր չեն կարող նմանւել լեռնային վուշի թելերի բարակութեանը, որոնք ծեծելիս դառնում են ամենամանր փոշի։ Այդ փոշուց տեխնոլոգ Գարրոն պատրաստեց ջրի հետ խառնելով մի տեսակ խմոր, որից նոյն կերպ, ինչպէս ճենապակից զանազան անօթներ են պատրաստում։ Քննութիւնները և փորձերը ցոյց են տալիս, որ ալբեստի ճենապակիի յատկութիները բնական ճենապակից աւելի մանր են և չեն թոյլ տալիս այդ յատկութիներով մանրադիտական խառնուրդներին անցկենալ և այդ պատճառով նրանից պատրաստած քամոցը (ֆիլտրը) շատ նպատակայարմար են հեղուկներ մաքրելու համար։ Բաւական է այդ քամոցները ժամանակ առ ժամանակ եռացող ջրով ողողել և նրա երեսից կարելի է հեռացնել ամեն կերպ պատառաքոյծներ։ Գիտնականները այդ պիսի քամոցի միջով ջուր և ուրիշ հեղուկներ քամելուց յետոյ համոզւեցին, որ այդ հեղուկների մէջ քամոցի միջով անցկենալուց յետոյ ոչ մի մանրադիտական կազմ չէ նկատւում։

—

Կանանց մեծամասնութիւն։ Նարերս Նէապոլում տեղի ունեցաւ մեծամասնութիւն երկու օրիորդների՝ 14 տարեկան Քեղումէնա Պռովօչելլիի եւ 16 տարեկան Ընջիօլինա Սճերրի մէջ, որոնք իրենց ատակերտուհիներ պարապում էին մի կար ու ձեւի արհեստանոցում։ Նրանք երկուսն էլ սիրահարւեցան միւսանոցի վրայ եւ իրար սասիկ սեղով, ոչ մէկը չէր համաձայնում հրաժարւել իր սիրոյ առարկայից։ Վերջապէս ընրանք վճռեցին մեծամասնել վկաների ներկայութեամբ եւ իրենց գէմ ընտրողին դատարանի միջոցներ։ Մեծամասնութեան հետեւանքը այն եղաւ, որ Ընջիօլինան կրծքին վերջացած անօճչացած փրուսեցաւ գեղին. Գրա՝ախոյեան Քեղումէնան ցոյցպէս մի բանի վերջ սռացաւ, բայց նրան բժշկեցին հիւանդանոցում, այն ինչ Ընջիօլինան անյոյս է եւ մեռնելու վրայ է։

—

Վաղուց արդեն յայտնի է, որ սապոնը հանդարտացնում է ծովային ալիքները։ Ներկայումս Senegal նաւահանգստի պատմում է, թէ Ադրիատիկական ծովում մեծ աշխատանքի ճանդիպելով, նա հրամայեց առանց չցասկնու իրէ իրէ ծովի մէջ չցնել մի բանի չիտ սապոնի չուր, իսկոյն եւ եր տասը մետր տարածութեան վրայ ծովը հանդարտեցաւ։ Ծիշտ նաւապետի կարծիքով սապոնի չուրը իւղից աւելի չատ է հանդարտեցնում ալիքները, քան որում աւելի հեշտ է միանում ծովի չրի հետ։

—

Հազացող եւ փռշտացող բոյս

Պարագւայում բնակւող դոկտար Բիւերը յայտնում է, որ այդ երկրում պատահում է մի բոյս, որին բուսաբանները Eutada tussiens անուն են տալիս եւ որը ընդունակ է հազալ և փռշտալ։ Այդ երեւոյթի համար բաւական է, որ բոյսի տերեւների վրայ մի փոքր փոշի նստի. փոշու գրգռմունքից տերեւը առաջ գունաթափւում է, յետոյ կարմրութիւն է ստանում, սկսում է ցնցւել և փռշտալու նման ձայներ է հանում։ Երէք նստած փոշին շատ է, այն ժամանակ կարծես թէ բոյսը հազից խեղդւում է և հազի ձայնը լսւում է մի քանի քայլ հեռւից։ Բացի այդ նրա բոլոր ծակոտիներից դուրս է սրսկում մանր ջրացող, որը այնքան է թրջում տերեւները մինչեւ որ նրանք բոլորովին մաքրւում են փոշուց։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

Ա Ն Ա Հ Ի Տ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՑ

Ազգային, գրական և գեղարուեստական

Բացուած է բաժանորդագրութիւն երրորդ շրջանի համար

Ամէն միջոցներ ձեռք առնուած են որպէս զի այս երրորդ շրջանին մէջ ԱՆԱՀԻՏԸ հրատարակուի բացարձակ կանոնաւորութեամբ։

Բաժանորդագինն է Ռուսիոյ համար տարեկան ճիշգ րուբլի. վեցամսեայ երեք րուբլի։ Բաժանորդագինը կանխիկ է։

Կը խնդրենք մեր Ռուսիոյ բաժանորդներէն որ նախորդ տարիներու դեռ անվճար բաժանորդագիրները փութան մեզ ուղարկել ինչպէս և երրորդ շրջանի բաժանորդագինը, եթէ կը ցանկան թերթը ստանալ այսուհետև։

Նամակ, յօդուած և բաժանորդագին պէտք է դրկել հետևեալ հասցէին.

A. Tchobanian, 17 Rue La Bruyère, Paris. (Փ.) 3—1

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՈՍԿՈՒ ՓԱՄԱՑՈՅՑՆԵՐԸ

Դժուար է զանազանել թանկագին ոսկեայ ժամացոյցներից ամենակատարեալ մեխանիզմ, անկեր, մանգալը քարերով. երեք ծածկոցներն էլ ծածկուած են մեքենայական եղանակով (ոսկեջրած) ստացուած ոսկուց, շատ գեղեցիկ են և ամուր, կարող են փոխարինել մեծ ոսկեայ ժամացոյցներին։ Ճշտութեան մասին երաշխաւորութիւն 6 տարով։ Գինն է ճանապարհածախսով Ռուսիայի բոլոր տեղերը 10 և 12 ր. կանանցը մի րուբլիով թանգ։ Ժամացոյցների հետ ուղարկուում է մի շղթայ ոսկեայ բրելոկով. եթէ պատւէր տուողը ցանկանայ նրա մոնոգրամմը ձրի փորագրուում է։ Ուղարկուում են 2 ր նախավճարը ստանալուց յետոյ վերադիր վճարով։ Հասցէն. Товариществу „ШАРЛЬ“- Варшава, Центральная почта, № 324.

Պատւէրները խնդրեմ ուղարկել ռուսերէն 6—5



Արտիստիկ. բնկ. Թատրոն.

Երեքշաբթի, փետրուարի 27-ին

Հռչակաւոր հայ դրամատիկ դերասանական խումբը մասնակցութեամբ տ. ՍԻՐԱՆՈՇԵԱՆ կը ներկայացնէ

ՍԱՖՕ

5 գործ. Թ. Ֆ. Աստուածատրեանի

Սաֆօի դերը կը կատարէ տ. ՍԻՐԱՆՈՇԵԱՆ

Սկիզբը է 8 ժամին. տեղերի գինը սովորականն է։

ՀԻՐՎԱՆԶԱՏԻ

Ն Ա Մ Ո Ի Մ

Վ Է Պ Ը

II-դ տպագրութեամբ

մամուլի տակ է, շուտով լոյս կը տեսնի։

Գինն է ճանապարհածախսով 1 ր.

Բաժանորդ գրուողները թող գիմեն. Баку, Старо-Полицейская, д. Лазарева, Александру Абеляну. 10—8

Կովկասի բարեկրթիչ գաղութների եւ ապաստարանի ընկերութեան վար. չութիւնը, ընկերութեան կանոնադրութեան № 16-ի համաձայն, իբրև դրում է ամենախոնարհաբար ընկերութեան պ.պ. անդամներին շնորհ բերել նրա սովորական ընդհանուր ժողովը ներկայ 1901 ամի, փետրուարի 25-ին ցերեկուայ ժամը 12-ին։

Ժողովի զբաղմունքի առարկաներն են։

1) Վարչութեան գործունէութեան հաշիւը 1900 թ. ընթացքում։

2) Ընկերութեան 1900 թ. դրամական հաշիւը։

3) Բարեկրթիչ գաղութների հաշիւը 1900 թ.

4) Ընկերութեան 1901 թուականի եւ մտից հաշիւը։

5) Քննիչ մասնախմբի զեկուցումը 1900 թ. հաշւի և 1901 թ. հաշւի վերաբերութեամբ։

6) Վարչութեան կազմի և քննիչ մասնախմբի ընտրութիւնը նոր 1901—1903 եռամեակի համար։

Ծանօթ. Ընդհանուր ժողովը կայացած է համարուում, երբ մասնակցող անդամների թիւը 20-ից պակաս չլինի (ընկերութեան կանոնադրութեան № 17)։

1—1

ԱՒՏԱՀԻՆ ՄԱՍՆԱԳԻՏ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հ. Ն Ա Ի Ա Ս Ա Ր Դ Ե Ա Ն Ի

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում եւն առաւօտեան օր բացի կիրակի օրերից։

Առաւօտեան ը

Ք. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. մի ա բուժութեան, վեներական (սիֆիլիս) եւ միզասեռ. հ.

Կ. Մ. Շիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին եւ նեարդային հ.

Կ. Ի. Գզելիեւ—11—12 ժ. կանանց եւ երեխայոց հ.

Ի. Փ. Պրոտասեւիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի եւ կրծքի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին եւ երեխայոց հ.

Երեկոները

Ի. Փ. Պրոտասեւիչ—6—7 ժ.

Ա. Ն. Զպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն). վէներ. և մորթու հ.

Փ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.

Ք. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50. կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Ծ. Տ. Առանձնակի—տանը ծաղկահաւաքութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Նաւասարդեան

Дозв. ценз. 23-го февраля 1901 г. Տպարան Կ. Մարտիրոսեանցի Тип. К.Мартиросіанца Орб. №1—2.